# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
## ՄԵԾ ՊԱՐՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

«06» 05 2017թ.
հեռ. (0255) 6– 18 - 97
mail: metsparni.lori@mta.gov. am
թիվ ՄՊ-80

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

ՊՐ-Ն Ա. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Նալբանդյան

Կից Ձեզ եմ ներկայացնում Մեծ Պարնի համայնքի ավագանու 2017 թվականի մայիսի 3-ի թիվ 15-17 որոշումները:

Առդիր 4 թերթ

**Համայնքի ղեկավար ------------------------ Գ. Պալյան**

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ ՄԵԾ ՊԱՐՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ * 06801098 *

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՄԵԾ ՊԱՐՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Մեծ Պարնի համայնք, գ. Մեծ Պարնի, հեռ.0255 61897
էլ. փոստ՝ metsparni.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

«03» մայիսի 2017 թ. N 15-Ա

## «ԹՈՉԿԱՆ» ԲՀ-Ի ՀԱՆԳՍՏՅԱՆ ԳՈՏՈՒՄ ԵՆԹԱԿԱՌՈՒՅՑՎԱԾՔՆԵՐ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին" ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ և 25-րդ կետերով և հիմք ընդունելով Կայուն ջրային միջավայր գիտական, էկոլոգիական ՀԿ-ի Եվրոպական Միության "Աջակցություն Հայաստանի Հանրապետության քաղաքացիական հասարակության կազմակերպությունների կարողությունների հզորացմանը" ծրագրի շրջանակներում **"Զբոսաշրջության զարգացման նախադրյալների ստեղծում ՀՀ Լոռու մարզի Մեծ Պարնի համայնքում"**ենթածրագրի համար դրամաշնորհի ստանալու դեպքումայն Մեծ Պարնի համայնքում իրականացնելու առաջարկը,

ՀՀ Լոռու մարզի Մեծ Պարնի համայնքի Ավագանին որոշում է.

1. Թույլատրել Կայուն ջրային միջավայր ՀԿ-ին Եվրոպական Միության կողմից դրամաշնորհի ստանալու դեպքում Մեծ Պարնի համայնքում իրականացնել "Զբոսաշրջության զարգացման նախադրյալների ստեղծում ՀՀ Լոռու մարզի Մեծ Պարնի համայնքում" ծրագիրը:
2. Թույլատրել ծրագրի շրջանակներում իրականացնել շինարարական աշխատանքներ համայնքի սեփականություն հանդիսացող, "Թոչկան" բնության հուշարձանի հանգստյան գոտու (1.1հա) տարածքում, առանց խախտելու տարածքի լանշաֆտն ու գետի ջրային էկոհամակարգը:
3. Մեծ Պարնի համայնքը պարտավորվում է ծրագրի իրականացման համար կատարել 3.0մլն. ՀՀ դրամի չափով (մոտ 5800 եվրոյի համարժեք) ներդրում. "Թոչկան" ԲՀ-ի հանգստի գոտում ենթակառուցվածքներ ստեղծելու համար.

| Համայնքի ավագանու անդամներ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Արզումանյան Արամայիս | | | |
| Գասոյան Կարեն | | | |
| Ղոչիկյան Լուսինե | | | |
| Նազարյան Արամ | | | |
| Զորյան Անդրանիկ | | | |
| Զորյան Բաբկեն | | | |
| Սանթրոսյան Գրետա | | | |

Համայնքի ղեկավարի՝ ---------------Գ. Պալյան

20 17 թ. 03 մայիսի
գ. Մեծ Պարնի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
## ՄԵԾ ՊԱՐՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Մեծ Պարնի համայնք, գ. Մեծ Պարնի, հեռ.0255 61897
Էլ. փոստ՝ metsparni.lori@mta.gov.am

## ՈՐՈՇՈՒՄ

«03» մայիսի 2017 թ. N 16-Ն

### ՄԵԾ ՊԱՐՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 29 -Ի << ՄԵԾ ՊԱՐՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ԹԻՎ 40 -Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, << Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասով, <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածի 2-րդ մասով և 70-րդ հոդվածի 6-րդ մասով՝

Մեծ Պարնի համայնքի ավագանին որոշում է.

1. Մեծ Պարնի համայնքի ավագանու 2016 թվականի նոյեմբերի 29 -ի << Մեծ Պարնի համայնքի 2017 թվականի բյուջեն հաստատելու մասին>> թիվ 40 -Ն որոշման մեջ կատարել փոփոխություն և շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն թիվ 1-ից թիվ 6 հավելվածների:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող տասներորդ օրը:
3. Սույն որոշումը օրենքով սահմանված կարգով ներկայացնել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն պետական իրավական փորձաքննություն անցկացնելու համար:

| *Համայնքի ավագանու անդամներ* | *Կողմ* | *Դեմ* | *Ձեռնպահ* |
|---|---|---|---|
| *Արզումանյան Արամայիս* | [signature] | | |
| *Գասոյան Կարեն* | [signature] | | |
| *Ղոչիկյան Լուսինե* | [signature] | | |
| *Նազարյան Արամ* | [signature] | | |
| *Զոթյան Անդրանիկ* | [signature] | | |
| *Զոթյան Բաբկեն* | [signature] | | |
| *Սանթրոսյան Գրետա* | [signature] | | |

*Համայնքի ղեկավարի* ---------------------*Գ. Պալյան*

20 17 թ. 03 մայիսի
գ. Մեծ Պարնի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ՄԵԾ ՊԱՐՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ


Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Մեծ Պարնի համայնք, գ. Մեծ Պարնի, հեռ.0255 61897
էլ. փոստ՝ metsparni.lori@mta.gov.am


## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«03» մայիսի 2017 թ. N 17-Ա

### ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետին, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 60-րդ հոդվածի 1-ին մասին, համայնքի ավագանու 2017 թվականի մարտի 24-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Մեծ Պարնի համայնքի կամավոր խնդիրները, կամավոր խնդիրներին ուղղված սեփական լիազորությունները և դրանց լուծման նպատակով իրականացման կարգը սահմանելու մասին» թիվ 10-Ա որոշմանը համապատասխան, հիմք ընդունելով ստացված դիմումները և համայնքի զոհված զինծառայողների, զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննարկող հանձնաժողովի եզրակացությունը՝

Մեծ Պարնի համայնքի ավագանին որոշում է.

1. Բավարարել համայնքի բնակիչների դիմումները և համայնքի բյուջեից նրանց ընտանիքներին հատկացնել սոցիալական օգնություն՝ համաձայն հավելվածի.
2. Համայնքի ղեկավարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 10-օրյա ժամկետում բնակիչներին վճարել հատկացված գումարները:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

| Համայնքի ավագանու անդամներ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Արզումանյան Արամայիս | | | |
| Գասոյան Կարեն | | | |
| Ղոչիկյան Լուսինե | | | |
| Նազարյան Արամ | | | |
| Զորյան Անդրանիկ | | | |
| Զորյան Բաբկեն | | | |
| Սանթրոսյան Գրետա | | | |

Համայնքի ղեկավար՝ ----------------- Գ. Պալյան

20 17 թ. 03 մայիսի

Հավելված
ՀՀ Լոռու մարզի Մեծ Պարնի համայնքի ավագանու
2017 թվականի մայիսի 3-ի N 17-Ա որոշման

ՑՈՒՑԱԿ ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՄԵԾ ՊԱՐՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻՑ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ

1. Շալիկո Գասոյանին 50000 /հիսուն հազար / դրամ սոց. օգնություն
2. Սուրեն Արզումանյանին 50000 /հիսուն հազար / դրամ սոց. օգնություն
3. Մարինե Կիրակոսյանին 50000 /հիսուն հազար / դրամ սոց. օգնություն
4. Գոհար Բաղալյանին 30000 / երեսուն հազար/ դրամ սոց. Օգնություն
5. Ալլա Ղազարյանին 30000 / երեսուն հազար/ դրամ սոց. Օգնություն

Ընդամենը 210000 /երկու հարյուր տաս հազար / դրամ

ՄԵԾ ՊԱՐՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ Ս. ԳԱՍՈՅԱՆ